

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

MARS. «ՔՈՅՐԸ». պատկեր. հրատ. Յ. Յովնէփեանի, 109 եր. գին 25 կ.
Բազու, 1902:

Պատկերի սկզբում տպուած է յառաջաբան:

Այդ յառաջաբանում պ. հրատարակիչը յայտնում է ի միջի
այլոց հետեւալը.

«Վճռեցի հետզհետէ լոյս ընծայել պ. Mars-ի (Արշակ) թեր-
թերի բանասիրականներում տպուած կամ անտիպ աշխատու-
թիւնները և ահա սրանով ընթերցող հապարակութեան սեղանի
վրայ եմ դնում նրա «Քոյրը»:

Արտատպութիւն է «Քոյրը», թէ նոր տպուած՝ յայտնի չէ:

Այսպէս թէ այնպէս՝ «Քոյրը» պատկանում է վիպական
գրուածքների այն տեսակին, որ կոչւում է ֆէյլէտօնական վէպ:

Ինչպէս յայտնի է, եւրօպական, մասնաւորապէս ֆրան-
սիական լրագիրները սովորութիւն ունեն լցնել իրանց բանա-
սիրականները վիպական գրուածքներով, որոնցից առհասարակ
պահանջւում է ոչ այնքան գեղարուեստական արժանաւորութիւն,
որքան հետաքրքրութիւն և դիւրնթերցանելիութիւն:

Եւրօպայում կան այդպիսի վէպերի յատուկ հայթայթիչ-
ներ, որոնք տաճնեակներով թխում են այդպիսի վէպեր, իսկ
յաճախ նոյն իսկ հանդիսանում են լոկ կապալառու և ուրիշ-
ներին են յանձնում այդ վէպերը թխելու աշխատանքը:

Այդպիսի մի թխուած ֆէյլէտօնական վէպ է պ. Mars-ի
«Քոյրը»:

Վէպի հերոսը Ռուսաստանից գնում է Պօլիս, սիրահար-
ւում է մի օրիորդի վրայ, արժանանում է նրա փոխադարձ սէ-

րին և հրաւիրում է մօրը Պօլիս իրանց նշանադրութեան հանդիսին: Ամեն ինչ պատրաստ է նշանադրութեան համար. հիւրերը հաւաքուել են. սպասում են երկաթուղու գնացքին, որ բերելու է Պօլիս հերոսի մօրը: Օրիորդի հայրը սպասողութեան ձանձրալի ժամերը կարճելու համար սկսում է պատմել մի միջնագէտ իր կեանքից: Այդ միջնագէտը բռնում է ամբողջ պատկերի $\frac{1}{5}$ — $\frac{1}{6}$ մասը:

Գուրգէն էֆէնդին (այդպէս է օրիորդի հօր անունը) պատմում է, թէ ինչպէս շատ տարիներ առաջ ինքը Ռուսաստան գնաց, թիֆլիսում սիրահարուեց մի աղքատ, մուրացիկ օրիորդի վրայ, սիրուեց նրանից և արգէն զաւակի էր սպասում նախ քան ամուսնանալը (ինչ որ արգելքներ թող չէին տուել մինչ այդ ամուսնանալ), բայց այդ օրիորդը յանկարծ չքացաւ, կամելիզազարդ տիկնոջ նման տեղի տալով իր (Գուրգէնի) հօր աղաչանքներին:

Գուրգէն էֆէնդու վերջին խօսքը բերանումն էր, երբ ներս մտան վէպի հերոսն ու իր մայրը...

Այդտեղ վերջանում է պատկերը, որովհետեւ դուրս է գալիս, որ հերոսի մայրը այն նախկին մութացիկ օրիորդն է, որի հետ պէտք է ամուսնանար Գուրգէն էֆէնդին, և ուրեմն նշանուլիք երիտասարդն ու օրիորդը քոյր և եղբայր են...

Զուր աշխատանք կը լինի վնասուել պ. Mars-ի պատկերում հոգեբանութիւն և գեղարուեստ:

Պօլսոյ հայերը Ռուսաստանի հայերի բարբառով են խօսում: Գուրգէն էֆէնդին տասնեակ տարիներից յետոյ անգիր ստում է մի ամբողջ նամակ, որ բռնում է զբքոյկի չորս երես:

Պ. Mars-ի պատկերը լիքն է այդպիսի հոգեբանական սրխալներով, սակայն ունի նաև որոշ արժանաւորութիւններ:

Եղելութիւնը կատարւում է Պօլսում անցեալ դարի վերջերում, հայկական սարսափներից յետոյ: Հեղինակը օգտուելով այդ առիթից՝ բնորոշում է թիւրքական ոէժիմը և առողջ մտքեր է քարոզում իր հերոսի բերանով:

Պատկերի լեզուն հայերէն է և բաւական կանոնաւոր, թէև տեղ-տեղ պատահում են նաև անհարթութիւններ. «Շողկնաւոր սուլելով և տնքալով միշտ լողում էր առաջ, որը կանգ առաւ...» կամ՝ «Մայրենի լեզուն, որ անարդուած և հալածուած էր և որը այնքան վնասում էր հայերի կուտուրական առաջագիմութեան, սկսուեց աւանդուել նորարաց զպրօցներում»: